

Զ. ՌԱՍՅՈՒՆ, ՅՈՒՆԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆԳԻՆ և ՄԻՋՆԱԳՐԱՅԱՆ հայ ԲՆԱՐԵՐԳՈՒ-
թԻՈՒՆԸ, Հայերեն բնագրեր և հայագիտական ուսումնասիրություններ, Պեն-
սիլվանիայի համալսարանի հրատարակչություն, հ. 7, 1987, 255 էջ:

Ամպար /թ. 56/ <պրսկ. ambar, բահար /թ. 1/ <պրսկ. bahār «գարուն», ընդունվածն պլպուլ, դրախտ /թ. 5, 67, 69/ <պրսկ. draxt «ծառ»՝ գերայ «որդակետ» /թ. 4/ <պրսկ. zirā, զրևտան «բանտ» /Papp. I, 8/ <պրսկ. Zindān, զրեհ «գրահ» /թ. 37, 63, 72/ <պրսկ. Zireh, էֆէնտի «պարոն» տես նեխտ <թուրք. efendi «հռն. 'սպիշապար- լան հայ' հուշարձաններում հանդիպում է նաև ռումբ ձևը) (ԻԳ, 58, 73, 98, տես նաև էջ 147) <արաբ. rumh/ հմմտ. քրդ. řim, թուրքայ. «գերեզման» /PAPM. I, 2 <թուրք.

/<արար. /türbe, 122 <դիակա> /PApp. I, 14/<արար. na š, լուրժ <հմայք, քնքրություն>.
 /ժև, 11/<արար. luſi, խաբար /ժԴ, 2/<արար. xabar <լուր>, խաղրնի <զանձ> /ժԲ, 3/
 <արար. xazīna, խաշխաշ /ժԵ, 38/<պրակ. xašxāš, խոխ <դեղձ> /ժԵ, 62/<արար. xauxa-
 խորոտիկ /հմմտ. էջ 67, ծան. 1, խումար <հարթած> /ժԴ, 2/<արար. xumār /հմմտ. նաև
 /խումրե/իլ <հարբել> բայաձևը, տես էջ 72, ծան. 2/, խուպ /տուրաթ< <գեղեցիկադեմ> /Ա,
 1. Դ, 2/, հմմտ. նաև ղեղեցիկ կերպիւ սուրար /ժԴ, 35/<պրակ. xōb <լավ>, խոջ <ուրախ>
 PApp. V, 30/<պրակ. xōš, կուլի տաստան /տես էջ 76, ծան. 48/, հարամի <ավաղաղ>
 /PA pp. I, 7/<արար. hārāmī, հիհայ /PApp. I. 10/<արար. hīnna, ղամար /ժԴ, 6/<արար.
 iſqamar <լուսին>, ղանարայ /PApp. I. 8/<արար. qannara <սպանդանոց>. վավ /<խոստում>
 /PApp. I, 23/<արար. qaul, զարար /ժԴ, 20/<արար. qarar <հանդիստ>. ղումաշ <կառորի
 եսակ> /ժԲ. 10/<արար. qumas <կտոր, զործվածք>/ոչ թուրք. humaš, ինչպես գրուն<
 ասելը. թուրք. բառը իր հերթին փոխառված է արար. վերահիշյալ ձևից/,
 6նյլատ <զահեհե> /ժԴ, 5, 10, 13, 30, 23, 29, 34, 48, PApp. I, 7/<արար.
 Jalīd, ճիկար <լեւարդ> /PApp. I, 18/<պրակ. zīgar, ճուհար /Ե, 2/ նաև ջու-
 հար /ժԴ, 14/, ջոհար /ժԴ, 50/<գոհար><արար. zauhār /<միջ. պրակ>.
 gōhr/, ճոշան /ԴԴ, 6/<պրակ. zōsan <զարհ>, մխտան <հարթած> /տես էջ 72, ծան. 2/<
 պրակ. mast, մտրուպ /PApp. I, 5/<արար. mušrib <երգչի>, մուշկ /ժԴ, 26/<պրակ. mušk,
 ցախ /ժԴ, 24/<արար. naqš /հմմտ. ցախոդ, տես Ա, 4/, ևարննի <հարնջադուշ> /PA
 pp. II, 11/<պրակ. narindjī, ցիգար <շկար, պատկեր> /տես ցախ /<պրակ. nigār /ցախ ու
 ցիգար <պակցություն> մեջ հմմտ. նաև ցախիղեար <պրակ. naxs-i-devār. տես էջ 29,
 ծան. 4/, ցուցուֆար /տես ընդհանր/<արար. nišfār, շահր <բաղադ> /ժԴ, 24, 58/<պրակ.
 šahr, շամս /ժԴ, 6/<արար. sams <արև>, շարխ <դեղձ> /ժ. 25/<պրակ. carx <անիմ>,
 չիհար /ժԴ, 32, ԺԴ, 17/<պրակ. činār <տոսի> /սալվ-ի չիհար <պակցություն> մեջ. -ի-ն,
 ինչպես ղանուն< է հեղինակը, հերթալի, իդաֆես է/. պաղոյալ <պարանգ> /passim/<պրակ
 bayča. պալուլ /Ը, 8/, նաև պիլպիլ /PApp. V, 62/, բիբու /ժԴ, 38, ԺԵ, 27/, <տոհակ>
 <պրակ. buibul, ջոհար (տես ցուհար), ջուհար (տես ցուհար), սալվ /ժԴ, 35/<պրակ. sarv
 <նոհ>, սարթան /տես էջ 104, ծան. 32/, սիվար <գեմ> /տես շուրի/<արար. šifāt, սու-
 րաթ <գեմ> /տես խուլ/<արար. šūrat, սուրմա <ծաբիբ> /PApp. I, 9/<պրակ. surmah,
 տարխայ /Բ, 4/<պրակ. daryā <ծով>, տիքայ-տիքայ <կտոր-կտոր> /PApp. I, 13/<պրակ.
 ika-tika, տպադիտն /Ե, 2/<հուն. τῆπις, տոստոբան /տես էջ 136—137/, բամյալ <հա-
 վաքված, ժողովված> /ժ. 33, PApp. IV, 32/<դեբրայական ձև< Գրամի/իլ բայից, որը ղեռն-
 մինատիվ կազմություն է պրակ. փոխառյալ ram(a) <հոտ, ժողովուրդ> գոյականից /հմմտ.
 երամ, որը փոխառյալ է միջին պարսկերենից/, փանցար <պատուհան> /PApp. V, 71/<
 պրակ. panjara, քարամ <ողորմություն> /ժԱ, 12/<արար. karam, քաֆուր /ժԲ, 2. ԺԴ, 39/
 <արար. kāfir, ֆրոտ /Դ, 3/, նաև ֆետայ /PApp. I, 17/<գոհ, մատաղ><արար. fidā.

J. R. Russel, Zoroastrianism in Armenia, „Harvard Iranian Studies“
vol. 5, 1987, 578 p.

Ջ. ՌԱՍԽԼ, Զրադաշտականությունը Հայաստանում, «Հարվարդի իրանագիտական ուսումնասիրություններ», հ. 5, 1987, 578 էջ:

1987-ր. ամերիկացի հայագետ Զ. Ռասելի համար լավադանց բեղմնավոր եղավ. բացի մի քանի հոդվածներից, որոնք տպագրվեցին տարբեր գիտական պարբերականներում, և արդեն նշված՝ Բյուրախեցուն նվիրված գրքից, նա հրատարակեց նաև սովորածովալ մի աշխատություն՝ «Զրադաշտականությունը Հայաստանում» վերնագրով: Այս գիրքը բաղկացած է նախաբանից, ընդարձակ առաջաբանից (25 էջ) և 16 գլուխներից: Արժե նշել դրանցից մի քանիսը. Արամազդ, Վահագն, Անահիտ և Նանե, Միհր, Տիբ, Սպանդարամետ-Սանդարամետ, Տորք, Հաւրոտ և Սարոտ, Գերված ուժեր (Արտավազդ, Մհեր ևլն), Զար ոգիներ, Արևի պաշտամունք, Արևորդիներ: Աշխատանքն ունի նաև մատենագիտություն և մանրամասն առարկայացանկ: Հեղինակը որքան կցել է նաև երկու քարտուկ: Այս գիրքը հայոց նախաքրիստոնեական հավատին նրվիրված միակ ամբողջական ուսումնասիրությունն է՝ կատարված գիտական բարձր մակարդակով և համարյա բոլոր՝ գործին վերաբերող արբյուրների ընդգրկմամբ:

F. Vahman. Arda Wiraz Namag-the Iranian „Divina commedia“, „Scandinavian Institute of Asian Studies“, №53, London, 1986, 326 p.

Ֆ. ՎԱՀՄԱՆ, Արտա-Վիրազ ճամակը՝ իրանական «Աստվածային կատակերգությունը», Ասիական հետազոտությունների սկանդինավյան ինստիտուտ, հ. 53, Լոնդոն, 1986, 326 էջ:

«Արտա-Վիրազ ճամակը» միջին պարսկական գրականության առավել հայտնի նմուշներից է, Դա իրանական ապոկալիպտիկ ժանրի լավ պահպանված ստեղծագործություն է, սրտեղ պատմվում է Արտա-Վիրազի (ասաքինի Վիրազի) արկածներն անգրաշխարհում, Հայտնի է այս Լրկի և Դանթեի «Աստվածային կատակերգության» նմանությունը: «Արտա-Վիրազ ճամակը» իր զուգահեռներն ունի նաև հայ և ընդհանուր քրիստոնեական գրավոր և բանավոր գրականության մեջ: Այս Լրկը մեծ նշանակություն ունի ինչպես իրանական ժողովուրդների կրոնաբարոյական հայացքների և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության, նաև իրանական հայացքների և սոցիալ-տնտեսական հավատի (որը կրում է իրանական ազդեցություն)՝ աշխարհում էլ հայ նախաքրիստոնեական համար: Ստեղծագործությունը թարգմանված է օտար լեզուներով: Վերջերս այն կրկին հրատարակվեց և թարգմանվեց անգլերեն՝ Ա. Պալիարոյի և Ֆրանսերեն՝ Ֆ. Ժինյուի կողմից: «Արտա-Վիրազը» հայերեն թարգմանել է Ռ. Արրահամյանը և հրատարակել 1958 թ. Երևանում՝ Կ. Մելիք-Օհանջանյանի առաջարկով: Եվ ահա վերջերս՝ 1986 թ., այս տեքստն արժանացավ ես մի հրատարակության, որն իրագործել է դանիացի ճանաչված իրանագետ, Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Վահմանը: Սույն հրատարակությունը չափազանց կարևոր է նախ և առաջ նրանով, որ տրվում է քննական բնագիրը, որի հիմքում ընկած է կոպենհագենյան Կ 20 ձեռագիրը՝ ամենակատարյալը մեղ հասած ձեռագրերից: Բացի այդ, այս հրատարակության մեջ մեծ դեր է խաղացել հաշվիչ մեքենայի կիրառումը, որի օգնությամբ (բացի բառարանի բառացանկից) կազմվել է նաև հանգարառարան և համարաբառու: Տրվում է բնագրի անդրերև թարգմանությունը՝ տառադարձությամբ և հնչադարձությամբ հանդերձ: Հեղինակը պահպանել է տեքստի հնչադարձության համար հիմք է ընդունել ուղ սասանյան արտասանությունը՝ հետևելով Դ. Մաքքենզլուն: Ֆ. Վահմանը բնագիրն ու թարգմանությունը օժտել է մանրամասն և արժեքավոր ծանոթագրություններով և բառարանով, որոնցով էլ հիմնականում պայմանավորված է գրքի գիտական արժեքը: Օգտագործված է «Արտա-Վիրազին» և, այսպես կոչված, տեսիլային ժանրին վերաբերող ամբողջ գրականությունը, այդ թվում նաև Ռ. Արրահամյանի վերոհիշյալ հայերեն թարգմանությունը: Ֆ. Վահմանի հրատարակությունը վերջին խոսքն է պահպանական այս հետաքրքիր տեքստի ուսումնասիրության բնագավառում:

N. Sims - Williams, The Christian Sogdian Manuscript C2, Berliner-Turfantexte XII, Berlin, 1985, 250 p. + XCV ill.

Ն. ՍԻՄՍ-ՎԻԼԻԱՄՍ, Քրիստոնեական սողալական C2 ձեռագիրը, Բեռլինի թուրքաբանական թանգարան, հ. 12, Բեռլին, 1985, 250 էջ + XCV լուսապատկերներ:

W. Sundermann, Ein manichäisch-soghdisches Parabelbuch, Berliner-Turfantexte XV, Berlin, 1985, 67 S. + XXIV ill.

Վ. ՋՈՒՆԴԵՐՄԱՆ, Մանիքեական սողալական առակագիրք, Բեռլինի թուրքաբանական թանգարան, հ. 15, Բեռլին, 1985, 67 էջ + XXIV լուսապատկերներ:

Սողգերենը արևելյան ճյուղի միջին իրանական լեզու է և ավանդված է մոտ մ. թ. ա. I դարից (գրամաների վրա արձանագրություններ) մինչև IX դ. ընդգրկող հարուստ գրականություն, որը հիմնականում պատկանում է երեք կրոնական ուղղությունների՝ բուդդայական, մանիքեական, քրիստոնեական: Սողգերենով մեզ են հասել նաև որոշ արձանագրություններ: Սողգերեն գրավոր աղբյուրները ավանդված են երեք տեսակի աղբյուրներով՝ ասորական, մանիքեական և՝ նույնպես արամեական գրից առաջացած, այսպես կոչված, սողգական ազգային գրով: Սողգերենը բաժանվում է երեք հիմնական բարբառների՝ բուդդայական սողգերեն, մանիքեական սողգերեն և քրիստոնեական սողգերեն, որոնք իրարից որոշակիորեն տարբերվում են: Սողգական գրականության հուշարձանների մեծ մասը հայտնաբերվել է XIX դ. վերջին և XX դ. սկզբին Թուրքանի օազիսում (Չինական Թուրքեստան): Այդ պատճառով էլ սողգերեն աղբյուրների ուսումնասիրությունը սկսվեց բավական ուշ՝ XX դ. սկզբից. ըստ այսմ միջին արևմտաիրանական բարբառների (միջին պարսկերեն, պարթևերեն) ուսումնասիրվածության համեմատությամբ:

սողագիտությունը և Երևանի միջին դպրոցի ուղղությունը, իրանագիտության մեջ, Սողգեանի քերականական կառուցվածքը և բառապաշարն առավել հարուստ են թերևս բոլոր միջին իրանական լեզուներից (նույնիսկ խոթաներենից)։ Սողգական բնագրերը ունեն նաև գրական և պատմական նըշանակություն։ Ձևայած դրան, այս գիտական բնագավառը, համեմատած իրանագիտության այլ ուղղությունների հետ, զարգանում է բավական դանդաղ, որը թերևս պայմանավորված է լեզվի դժվարամատչելիությամբ և այլ հարակից պատճառներով։ Բավական է ասել, որ ՍՍՀՄ-ում դրանով զբաղվում են երկու-երեք ուսումնասիրող (Վ. Ա. Լիվշից, Մ. Ն. Բոգոլյուբով)։ Սողգական բառարանը ունի նմուշներ ավանդված են նաև հայերենում, որոնք մեր լեզվին են անցել պարթևների միջոցով (հմտ. մարգարե—սողգ. mrkryv, կարի—սողգ. k'iy, կատակ—սողգ. k'it'k և այլն)։ Նման բառերի թիվը, ի հաշիվ սողգական նոր աղբյուրների հրատարակության, օրեցօր աճում է։ Ըստ այսմ, առանց լափազանցության կարելի է ասել, որ սողագիտության մեջ յուրաքանչյուր նոր աշխատանք առնչվում է նաև հայագիտությանը։ Ահա այս պատճառով էլ լափազանց կարևոր են վերևում նշված երկու գրքերը, որոնց հեղինակները՝ անգլիացի իրանագետ Ն. Սիմս-Վիլիամսը և արևելագետ Գրեյսը իրանագետ Վ. Ջոնզերմանը սողագիտության և ընդհանրապես իրանական բանագիտության հանրաճանաչ մասնագետներ են։

Քրիստոնեական սողգական C2 ձևագիրը, թեկուզ մասնակի պահպանվածությամբ, սողգական ամենաընդարձակ ձևագրերից է և կարող է մրցել այնպիսի լավ պահպանված ձևագրերի հետ, ինչպիսին Վեստանտարա Ջատական է։ Այն ընդգրկում է հիմնականում առերեմից թարգմանված բնագրեր՝ սրբերի վարդեր, քարոզներ, մեկնություններ և այլն։ Այս ամբողջ ձևագիրը գրված է մի գրչի կողմից և այդ պատճառով լափազանց հետազոտական է ուղղագրության և լեզվի տեսակետից, որն էլ սույն ձևագրին հաղորդում է լեզվաբանական կատարյալ աղբյուրի արժեք։ Հրատարակությունը գիտական բարձր մակարդակ ունի։ Բնագիրը գրադարձվել է և թարգմանվել՝ օժտվելով մանրամասն ծանոթագրություններով և բառարանով։ Գրքի վերջում բերված են տեքստերի լուսանկարները։ Գիրքն ունի նաև առաջաբան և բառացանկեր։ Մի ոչ մեծ գլուխ նվիրված է նաև ձևագրի լեզվի ձևաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությանը (էջ 191—200)։ Գրքում քննարկվում են հայերեն քաղիք, եթե/է, ճամալուհե, պահանջեմ, պախեմ, վյա(վտ)։, խոյզ (խուզեմ) բառերը։

Ինչ վերաբերում է երկրորդ գրքին, ապա այն իրենից ներկայացնում է սողգերեն լեզվով գրված մի քանի առակների հրատարակություն՝ գերմաներեն թարգմանությամբ և ծանոթագրություններով, ինչպես նաև մանրամասն բառարանով։ Գրքին կցված են նաև բնագրերի լուսապատկերները և Ֆ. Գայսլերի կողմից գրված առակների մոտիվներին նվիրված ակնարկը (էջ 59—67)։ Այս գիրքը կարևոր նշանակություն ունի ինչպես իրանական լեզվաբանության, այնպես էլ համեմատական բանագիտության համար։

II. Gershevitch, *Philologia Iranica*, selected and edited by N. Sims-Williams, „Beitrag zur Iranistik“, Bd. 12, Wiesbaden, 1985, 303 p.

Ի. ԳԵՐՇԵՎԻՉ, Իրանական բանասիրություն, կադմեց և խմբագրեց Ն. Սիմս-Վիլիամսը, «Իրանագիտական հետազոտություններ», հ. 12, Վիսբադեն, 1985, 303 էջ։

Գիրքն ընդգրկում է անգլիացի հայտնի իրանագետ, Լոնդոնի բանասիրական ընկերության «նախագահ» Ի. Գերշևիչի՝ նախկինում հրատարակված հոդվածների ժողովածուն։ Այն հրատարակության է պատրաստել նոր աշակերտ Ն. Սիմս-Վիլիամսը։ Գիրքը բացվում է Ի. Գերշևիչի աշխատանքների մատենագիտությամբ (էջ I—XV)։ Այստեղ տեղագրված են գիտնականի 25 հոդված, որոնցից յոթնորեն հայտնի են Քարդ կազմությունները սողգերենում (1946 թ.), «Բառ և ճոգի հասկացությունները օսերենում» (1955 թ.), «Բարառային տարրերությունները վաղ պարսկերենում» (1965 թ.), «Բակտրիական արձանագրություններ և ձևագրեր» (1967 թ.) և այլ կարևոր աշխատանքներ։ Ի. Գերշևիչի հոդվածների այս ժողովածուի մեջ քննարկվում են հայերեն հետևյալ բառերը. ապե—, ասպաբէզ, բա, բան, բավել, բաժակ, բաժապան, ցուրառ, դրաւ, զանձապան, դաւո, գրիվ, զուգազ, շատագով, կան, կաբապետ, կաբապետեմ, կրպակ, վար, մագդեզե, եիշ, նշան, նշալ, նզար, պան, պանետ, պստգամ, պստոյկ, շաւ, շնոմ, տսււպար, տոյժ, տուզան, վանառ, վանկ/զ. զոն։

Դ. Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

Իրանագիտական գիտությունների քնննստու